

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՇՈՒՇԱՆ ԱՍԻԼԲԵԿՅԱՆ  
ՍԵՂԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ  
ՆԱԻՐԱ ԽԱԶԻԲԱԲՅԱՆ

# ՆԱՅԵՐԵՆՏԻ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, ՇՈՒՇԱՆ ԱՍԻԼԲԵԿՅԱՆ,  
ՍԵՂԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ, ՆԱԻՐԱ ԽԱԶԻԲԱԲՅԱՆ**

# **ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ**



**The National Academy of Sciences of the Republic of  
Armenia H.Acharian Institute of Language**

**MERI SARGSYAN, SHUSHAN ASILBEKYAN, SEDA  
BAGHRAMYAN, NAIRA KHACHIBABYAN**

**AFFIX DICTIONARY OF THE  
ARMENIAN LANGUAGE**

Yerevan - 2024

**Национальная академия наук Республики Армения  
Институт языка имени Р. Ачаряна**

**МЕРИ САРГСЯН, ШУШАН АСИЛБЕКЯН,  
СЕДА БАГРАМЯН, НАИРА ХАЧИБАБЯН**

# **АФФИКСАЛЬНЫЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

Ереван - 2024

ՀՏԴ 811.19'374

ԳՄԴ 81.51-4

Հ 249

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ:

Հետազոտությունն իրականացվել է «Գալուստ Կիլպենկեան»  
հիմնադրամի տրամադրած ֆինանսավորմամբ:

Խմբագիր՝ Բ.Գ.Ռ. Հ. Հ. Մեսրոպյան

**Հայերենի ածանցների բառարան / Մ. Սարգսյան, Շ.**

**Հ 249 Ասիլբեկյան, Ս. Բաղդամյան, Ն. Խաչիբաբյան.- Եր.:  
Արմավ, 2024.- 104 էջ:**

*«Հայերենի ածանցների բառարանը» կարող է ծառայել որպես  
ուղեցույց հայերենի ածանցների մեծ «աշխարհը» ուսումնասիրելու  
և ճանաչելու համար: Այն կնպաստի բառապաշարի հարստացմանը,  
կօգնի լեզվի ուսուցմանը, կաջակցի գրելու հմտության զարգացմանը,  
կխորացնի բառակազմական գործընթացների ըմբռնումը:*

*Այն կարող է օգտակար լինել ընդհանուր և հայ լեզվաբանության  
հետաքրքրվողների, ինչպես նաև բանասիրական ֆակուլտետների  
ուսանողության համար:*

ՀՏԴ 811.19'374

ԳՄԴ 81.51-4

**ISBN 978-9939-78-343-7**

©Սարգսյան Մերի, 2024

©Ասիլբեկյան Շուշան, 2024

©Բաղդամյան Սեդա, 2024

©Խաչիբաբյան Նաիրա 2024

©Արմավ հրատարակչություն, 2023

ՆԿԻՐԿՈՒՄ Է ՆՆ ԳԱԿ Ն. ԱՅԱՆՅԱՆԻ  
ԱՆԿԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՆԻՄՆԱԴՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ-----	9
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ-----	19
ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ-----	33
ՄԻՋԱԾԱՆՑՆԵՐ-----	89
ԲԱՅԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ-----	91





# ԿՈՎՓՎԲՎՆ

Յուրաքանչյուր կենդանի լեզու, այդ թվում՝ հայերենը, շարունակ փոփոխվող համակարգ է, որն անընդհատ զարգանում և կատարելագործվում է: Գրական լեզուն հարստանում է և՛ նորաբանությունների, և՛ օտար լեզուներից կատարվող փոխառությունների միջոցով, բայց և լեզվի բառապաշարը հիմնականում հարստանում է բառակազմության շնորհիվ:

*Բառակազմություն* տերմինը գործածվում է երկու իմաստով. 1. հիմնական և բառակազմական երկրորդական ձևույթներով (ինչպես և այլ միջոցներով) նոր բառեր կազմելը, որ սովորաբար արտահայտվում է բարդությամբ, ածանցմամբ, հապավումով, 2. լեզվաբանության (բառագիտության կամ ձևաբանության) այն բաժինը, որն ուսումնասիրում է բառի ձևաբանական կազմը և նոր բառեր կազմելու հիմնական եղանակները<sup>1</sup>:

Լեզուն պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառակազմության ուրույն միջոցներ ու եղանակներ: Ժամանակի ընթացքում լեզվից իսպառ վերանում են բառակազմական որոշ երևույթներ, առաջ են գալիս նոր իրողություններ, որոնք հնարավորություն են ընձեռում կենսունակ եղանակներով բառեր կազմելու: Հայերենն ունի բավականին ճկուն բառակազմություն, որն էլ հնարավորություն է տա-

---

1 Տե՛ս Հ. Չ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարաբյուրյան, Լեզվաբանական բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 53:

լիս հայերենում գործածվող արմատների, բառերի և ածանցների միջոցով բազմաթիվ նոր բառեր ստեղծելու և այլալեզու տերմիններ հեշտությամբ թարգմանելու:

Ժամանակակից հայերենում բառակազմության եղանակները երեքն են՝ բառաբարդումը, ածանցումը և հապավումը: Ածանցումը՝ որպես բառակազմական եղանակ, մեծ դեր ունի լեզվի բառապաշարի հարստացման գործում: Գ. Սևակը նշում է, որ ածանցումը բառակազմության տեխնիկայի զարգացման համեմատաբար բարդ աստիճան է և, որպես կանոն, հաջորդել է անիսկական և իսկական բարդություններին: Այնուհետև հավելում է, որ ածանցում ունեն և կարող են ունենալ միայն զարգացած լեզուները, որոնք արդեն ունեն վերաբերական իմաստ արտահայտող հատուկ ձևույթներ, այսինքն՝ ածանցներ<sup>2</sup>:

«Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազմական այն ձևույթը, որը, կցվելով բառահիմքին, փոխում է նրա բառային իմաստը, կազմում է նոր բառ՝ նոր իմաստով»<sup>3</sup>:

Ածանցները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ նախաածանցներ և վերջածանցներ: Նախաածանցն ավելանում է ածանցվող հիմքի սկզբից: Մեր լեզուն հնագույն շրջանում սակավաթիվ նախաածանց-

---

<sup>2</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, ԵՊՀ հրատ., Ե., 1955, էջ 172:

<sup>3</sup> Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), ԵՊՀ հրատ., Ե., 2017, էջ 316:

ներ է ունեցել, սակայն, ժամանակի ընթացքում բառակազմական հնարավորություններին զուգահեռ, աճել է դրանց քանակը. ժամանակակից գրական հայերենում դրանք բավականին շատ են:

Վերջածանցն ավելանում է ածանցվող հիմքի վերջից: Հայերենը հարուստ է վերջածանցներով. ըստ «Հայերենագիտական բառարանի»<sup>4</sup> ժամանակակից գրական հայերենում վերջածանցների թիվը հասնում է շուրջ 180-ի<sup>4</sup>: Ուսումնասիրությամբ պարզել ենք, որ դրանց թիվը ներկայումս ավելի մեծ է (250 և ավելի, որոնք զետեղված են հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանում<sup>5</sup>):

Ըստ ծագման՝ ածանցները լինում են բնիկ և փոխառյալ: Հայերենում ածանցների փոխառությունը ընդունված երևույթ չէ:

Բնիկ ածանցն ունի հայկական ակունքներ, փոխառյալը սերում է այլ լեզուներից: Լեզվի պատմության սկզբնական շրջանում փոխառված ածանցներն այժմ գիտակցվում են որպես բնիկ (օրինակ՝ դժ- ածանցը): Առհասարակ ածանցը ներթափանցում է փոխառյալ բառի հետ: Փոխառությունների հոսքի դեպքում միայն խոսողներն են գիտակցում ածանցական բաղադրությունը և գործածում են փոխառյալը: «Հայերենագիտական բառարանում» նշվում է, որ –

---

4 Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ, Ե., 1987, էջ 14:

5 Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարան, <https://formlang.am/hy>:

իստ, -իզմ ածանցների փոխառյալ լինելը (կոմունիստ, կոմունիզմ) գիտակցվում է, բայց դրանք մեր լեզվում բառակազմական ակտիվություն չունեն։ Կան միայն հազվադեպ ածանցումներ -իստ մասնիկով (թառիստ, քամանչիստ)<sup>6</sup>։ Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ -իզմ և -իստ ածանցների գործածությունը այժմ ընդլայնվել է<sup>7</sup>։

Փոխառյալ ածանցները սովորաբար ի հայտ են գալիս փոխառյալ բառերի կազմում, որոնցում դրանք նախապես ածանց չեն գիտակցվում, որովհետև բառը կիրառական է դառնում կառուցվածքային ամբողջությամբ։ Ժամանակի ընթացքում, երբ այդպիսի ածանցներով բառերի թիվը փոխառու լեզվում ստվարանում է, փոխառյալ բառերի մի հատվածն արդեն սկսում է ըմբռնվել ինքնուրույնաբար, իբրև բառի կառուցվածքային տարր (տվյալ դեպքում՝ ածանց)<sup>8</sup>։

Ժամանակակից հայերենի ածանցմանը և ածանցներին նվիրված առաջին ծավալուն ուսումնասիրությունը ներկայացված է հայագետ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ։ Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է ածանցների թե՛ կազմության, թե՛ ստուգաբանության, թե՛ առհասա-

6 Տե՛ս նույն տեղում, էջ 18:

7 Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարան, <https://formlang.am/hy>:

8 Տե՛ս Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), ԵՊՀ հրատ., Ե., 2017, էջ 323, տե՛ս նաև Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևանի համալսարանի հրատ., Ե., 2004, էջ 259:

րակ ածանցման խնդրին:

Ս. Էլոյանի «Ածանցները ժամանակակից հայերենում» մենագրությունը հայ լեզվաբանության մեջ ածանցներին նվիրված առաջին մենագրությունն է, որը ամփոփում ու վերաշարադրում է քննության առարկա խնդրի վերաբերյալ մինչ այդ եղած տվյալները: Ուսումնասիրությունն իր բնույթով տեսական է. ներկայացված են ածանցների առաջացման ուղիները, տրվում է ածանցների դասակարգումն ըստ տեղի, ընդհանուր նշանակության (բառակազմական, քերականական-բառակազմական), իմաստի և ձևի (հոմանիշ, հականիշ, նույնաձուն), գործածության (արտադրողական, անարտադրողական), կազմության, ինչպես նաև ըստ խոսքի մասեր կերտելու առանձնահատկության:

Գ. Ջահուկյանը «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ ևս անդրադառնում է հայերենի ածանցմանն ու ածանցներին և մի շարք նոր, արժեքավոր լուծումներ առաջարկում:

Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» ուսումնասիրությունը նվիրված է ժամանակակից հայերենի ածանցմանը և ածանցների քննությանը: Այն ներկայանում է որպես կառուցվածքների համաժամանակյա ուսումնասիրություն<sup>9</sup>:

Մեր ուսումնասիրության *հիմքում ընկած են*

---

9 Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում», Երևան, ԵՊՀ հրատ., 1978, 325 էջ:

հետևյալ բառարաններն ու բառացանկերը.

- Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»,
- Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»,
- Ս. Գալստյանի «Դպրոցական բառակազմական բառարան»,
- ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կազմած «Նոր բառեր» Ա- Դ պրակներ,
- Փ. Մեյթիխանյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարան»,
- Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»,
- Ա. Սուքիասյանի, Ք. Սուքիասյանի «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան»:

Ածանցները և համապատասխան օրինակները քաղված են վերը նշված բառարանների նյութի ձևային նկարագրության «**FormLang** հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանից», որը մեր հեղինակային շտեմարանն է և գործում է <https://formlang.am/hy/> վեբ հասցեի ներքո:

Ձևային նկարագրության ընթացքում և յուրաքանչյուր ածանցի նկարագրության ժամանակ հաշվի ենք առել արդի հայերենի կանոնները, ինչպես նաև շեղումներն ու բացառությունները: Ձգտել ենք հնա-



րավորինս պահպանել ուսումնասիրության համաժամանակյա սկզբունքը: Այդ իսկ պատճառով չենք անդրադարձել ածանցների ծագման, առաջացման, բառակազմական նշանակությունների պատմական զարգացման և այլ խնդիրների: Սակայն արդի հայերենի ածանցումը, և առհասարակ բառակազմությունը, ունի յուրահատկություններ, որոնք հնարավոր չէ հաշվի չառնել: Անժխտելի է, որ ժամանակակից հայերենի ածանցումը բազմաթիվ կողմերով առնչվում է մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին: Բացի այդ՝ արդի հայերենի ածանցական կազմը գերազանցապես գրաբարյան է, ածանցների արտահայտած բառակազմական նշանակություններից շատերը և հիմնականները հաճախ նույնն են գրավոր հնագույն շրջաններում վկայված բաղադրություններում և ժամանակակից հայերենում, հետևաբար դրանք պետք է նկարագրվեն նաև որպես արդի հայերենին բնորոշ առանձնահատկություններ:

Լեզվաբանական գրականության մեջ բառերը, ըստ կազմության, բաժանվում են հետևյալ խմբերի՝ *պարզ, ածանցավոր, բարդ, բարդ - ածանցավոր, բաղադրյալ*: Մենք ևս առաջնորդվել ենք այս դասակարգմամբ: Ըստ այդմ՝ ածանցները բառարանում ներկայացվում են ըստ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի՝ նախաածանցներ, վերջածանցներ, միջածանցներ, բայական ածանցներ: Յուրաքանչյուր ածանցի համար ներկայացվում են համապատասխան օրինակներ,

վերջածանցների դեպքում նշվում է նաև խոսքիմասային պատկանելությունը:

«Հայերենի ածանցների բառարանը» կարող է ծանայել գործնական տարբեր նպատակների.

1. **Տարբեր բառիմաստների պարզաբանում.** բառարանի միջոցով կարելի է բացահայտել և ճանաչել նախածանցների, վերջածանցների և միջածանցների, բայական ածանցների դերը բառաստեղծման գործում:

2. **Բառապաշարի հարստացում.** բառարանն ուսումնասիրելով՝ կարելի է հարստացնել բառապաշարը: Ընթերցողները կարող են սովորել նոր բառեր, որոնք ունեն ընդհանուր ածանցներ, և նկատել, թե ինչպես են ածանցները ազդում բառերի իմաստի, խոսքի մասի կամ քերականական կառուցվածքի վրա:

3. **Բառի կազմության մասին պատկերացում.** բառարանը պատկերացում է տալիս բառակազմության եղանակների վերաբերյալ: Ներկայացվում են օրինակափոխություններն ու լեզվական կանոնները՝ թույլ տալով ընթերցողին ճանաչել և վերլուծել մեր լեզվում բառերի ստեղծման և փոփոխման եղանակները:

4. **Լեզուների ուսուցման աջակցություն.** բառարանը արժեքավոր աղբյուր է լեզու սովորողների համար: Այն կարող է օգնել վերլուծելու անծանոթ բառերը՝ ճանաչելով ծանոթ մասնիկները և դրանց իմաստը, ինչպես նաև լեզվի կառուցվածքը և քերականությունը:

5. **Գրելու և խմբագրելու աջակցություն.** Բառարանը կարող է արժեքավոր գործիք լինել գրելու կարողությունը բարելավելու համար: Այն հնարավորություն է տալիս ընտրելու համապատասխան ածանցավոր բառեր՝ կոնկրետ իմաստներ ներկայացնելու, նոր բառեր ստեղծելու կամ գոյություն ունեցող բառերը փոփոխելու համար՝ ցանկալի համատեքստին համապատասխան:

6. **Լեզվաբանական վերլուծություն.** Լեզվաբանները կարող են կիրառել բառարանը՝ բառերի ներքին կառուցվածքը ուսումնասիրելու, բառակազմական օրինաչափությունները դիտարկելու և լեզուների պատմական զարգացման մասին գաղափար կազմելու համար:

Այսպիսով՝ «Հայերենի ածանցների բառարանը» կարող է ծառայել որպես հայերենի ածանցների մեծ «աշխարհը» ուսումնասիրելու և ճանաչելու ուղեցույց: Այն արժեքավոր տեղեկություններ է տրամադրում, որոնք բարելավում են բառապաշարը, օգնում են լեզվի ուսուցմանը, աջակցում են գրելու հմտության զարգացմանը, խորացնում են բառակազմական գործընթացների ըմբռնումը:

# ՆԱԽԱԾՎՆԵՐ

## **ԱՆ**

Անազնիվ//անազնիւ\*, անալիոթյուն//անալիոթին, անակնկալորեն//անակնկալօրէն), անամոթ//անամօթ, անանցանելիոթյուն//անանցանելիօթին, անանցյալ//անանցեալ, անաչառ, անապավեն//անապաւեն, անբարո//անբարոյ, անգութ:

## **Անդր // Անդրա**

Անդրաբեմ, անդրադարձ, անդրածին, անդրակարմիր, անդրակարոտ//անդրակարօտ, անդրահար, անդրածիգ, անդրամանուշակագույն//անդրամանուշակագոյն, անդրանետել, անդրաշխարհ, անդրավարտիք անդրբւեռ//անդրբւեռ, անդրերկրյա//անդրերկրեայ, անդրլեռնային, անդրծովյան//անդրծովեան, անդրկուլիսյան//անդրկուլիսեան, անդրծորյան//անդրծորեան, անդրշիրիմյան//անդրշիրիմեան, անդրշիրիմ, անդրօվկիանոսյան//անդրօվկեանոսեան:

## **Ապ//Ապա**

Ապաբւեռացում//ապաբւեռացում, ապաբյուրեղանալ//ապաբիւրեղանալ, ապագողէլ//ապագօղել, ապագգային, ապագգայնացում, ապաթույն//ապա-

---

\* Դասական ուղղագրությամբ տարբերակները նշվում են այն դեպքերում, երբ գրության ձևերը տարբեր են:

թոյն, ապաժամյա//ապաժամեայ, ապակազմավորել//ապակազմաւորել, ապակենտրոն, ապարոյուն//ապարդին, ապերախտորեն//ապերախտօրէն, ապերախտութիւն//ապերախտութիւն, ապերջանկութիւն//ապերջանկութիւն, ապշադեմ//ապշադեմ, ապացոյց, ապուշութիւն//ապուշութիւն, ապօրէն//ապօրէն), ապօրինութիւն//ապօրինութիւն, ապակայունացում, ապակենտրոնացում:

## **Առ//Առա**

Առագրութիւն//առագրութիւն, առադրութիւն//առադրութիւն, առադրում, առաձգորէն//առաձգօրէն), առաձգութիւն//առաձգութիւն, առաձիգ, առայժմ, առանձին, առանձնասենյակ//առանձնասենեակ, առանձնութիւն//առանձնութիւն, առանցք, առանցքային, առաջ, առատպել, առաքինի, առաքինորէն//առաքինօրէն, առաքինութիւն//առաքինութիւն, գնդառանցքակալ//գնդառանցքակալ, երկառանցք, նախառաջ//նախառաջ:

## **Արտ//Արտա**

Արտաբանալ, արտաբացել, արտաբերել, արտաբխում, արտագաղթ, արտագնա, արտագրութիւն//արտագրութիւն, արտադասարանային, արտադրել, արտազատել, արտածական, արտամուսնական, ար-

տանկում, արտանցք, արտաշխարհ, արտասել, արտարգանդային, արտարմատային, արտերկրյա//արտերկրեայ, արտուղղել:

## **Բաղ//Բաղա**

Բաղադրիչ//բաղադրական, բաղադրյալ//բաղադրեալ, բաղադրույթ//բաղադրոյթ, բաղակույտ//բաղակոյտ, բաղակցություն//բաղակցութիւն, բաղաձայն, բաղաձայնական, բաղաձայնավոր//բաղաձայնաւոր, բաղանունություն//բաղանունութիւն, բաղատոմս, բաղդասություն//բաղդասութիւն, բաղդատել, բաղդատություն//բաղդատութիւն, բաղիյունական//բաղիւսական, բաղիյունել//բաղիւսել, բաղիյունություն//բաղիւսութիւն:

## **Բաց//Բացա\***

Բացադարձել, բացադարձություն//բացադարձութիւն, բացակա//բացակայ, բացակայություն//բացակայութիւն, բացականչ, բացականչել, բացականչություն//բացականչութիւն, բացահայտ//բացայայտ, բացառաբար, բացառել, բացառիկ, բացառություն//բացառութիւն), բացասաբար, բացասել, բացասում, բացատրագրքույկ//բացատրագրքոյկ, բացատրութ-

---

11 Գրաբարյան բանլալ բայի անցյալի հիմքն է, որը ժամանակի ընթացքում որպէս նախածանց է հանդես գալիս:

յուն//բացատրողաթիւն, բացարձակ, բացարձակորէն//  
բացարձակօրէն, բացորոշ:

## **Գեր//Գերա**

Գերագահություն//գերագահութիւն, գերագան-  
ծել, գերագնահատել, գերագոյություն//գերագոյու-  
թիւն, գերադաս, գերագանցապետ//գերագանցապետ,  
գերակշռում, գերամուր, գերբեռնավորում//գերբեռ-  
նաւորում, գերաշնորհ, գերապատիվ//գերապատիւ,  
գերապետություն//գերապետութիւն, գերատեսչութ-  
յուն//գերատեսչութիւն, գերբնականորէն//գերբնակա-  
նօրէն, գերիշխան, գերլարված//գերլարուած, գերխա-  
բերա//գերխաբերայ, գերկատարյալ//գերկատարեալ,  
գերկրթված//գերկրթուած), գերիզոր//գերիզօր:

## **Դեր//Դերա**

Դերակոմս, դերանյութ//դերանիւթ, դերանուն, դե-  
րանվանական//դերանունական, դերարկել, դերբայ,  
դերբայաձև//դերբայաձեւ, դերծովակալ, դերկոմս,  
դերիյուկատոս//դերիիւկատոս, դերնախագահ, դե-  
րօծիք:



## **ԴԺ**

Դժբախտ, դժբախտաբար, դժգոհ, դժգոհել, դժգոհություն//դժգոհուլթիւն, դժգույն//դժգոյն, դժկամ, դժկամություն//դժկամուլթիւն, դժմիտ, դժպատեհ:

## **ԵՆՔ//ԵՆՔԱ**

Ենթաբաժին, ենթաբառույթ//ենթաբառոյթ, ենթաբւևեռ//ենթաբւևեռ), ենթագիտակցորեն//ենթագիտակցորէն, ենթագույն//ենթագոյն), ենթադրյալ//ենթադրեալ, ենթադրություն//ենթադրուլթիւն, ենթալեզվային//ենթալեզուային, ենթաձառա//ենթաձառայ), ենթածել, ենթանտառ, ենթավերնագիր, ենթարկել, ենթարկտիկա//ենթարկտիկայ, ենթարմատային, ենթարշավախումբ//ենթարշաւախումբ, ենթիմաստ, ենթիմաստույթ//ենթիմաստոյթ, ենթուղի, ենթօքսիդ:

## **ԸՆԳ**

Գիրկընդիսառն, դժվարընդունելի//դժուարընդունելի, ընդաճել, ընդամենը//ընդամենը, ընդառաջում, ընդարձակել, ընդգետնյա//ընդգետնեայ, ընդգրկել, ընդդիմադրություն//ընդդիմադրուլթիւն), ընդունել:

## **Թեր//Թերա**

Թերագնահատել, թերաթթվություն//թերաթթուութիւն, թերախոս//թերախօս, թերածիւն, թերակառոյց//թերակառոյց, թերակատար, թերակղզյակ//թերակղզեակ, թերահավատ//թերահաւատ, թերահավաք//թերահաւաք, թերաղալ, թերած, թերայրում, թերանդամ, թերաշինվածք//թերաշինուածք, թերասաց, թերավարտ//թերաւարտ, թերարժեք//թերարժեք, թերարյունություն//թերարիւնութիւն, թերըմբռնում, թերիմացություն//թերիմացութիւն:

## **Հակ//Հակա**

Հակաալիք, հակաբւեռ//հակաբւեռ, հակաբիոտիկ, հակազագ, հակազրոհ, հակադիր, հակադրույթ//հակադրոյթ, հակազգային, հակազդակ, հակազդել, հակաթույն//հակաթոյն, հակաիրավական//հակաիրաւական, հակասություն//հակասութիւն, հակընդդեմ//հակընդդեմ, հակընթաց, հակիմաստ, հակոտնյա//հակոտնեայ, հակուղիղ, հակօրինի:

## **Հար//Հարա//Յար**

Հարաբարդել//յարաբարդել, հարաբարձր//յարաբարձր, հարաբերական//յարաբերական, հարաբերակցել//յարաբերակցել, հարաբերապաշտություն//

յարաբերապաշտութիւն, արադասել//յարադասել, հարաբխել//յարաբխել, հարադրութիւն//յարադրութիւն, հարազոյժ//յարազոյժ, հարազկարթ//յարազուարթ, հարախորժ//յարախորժ, հարականջային//յարականջային, հարակեզ//յարակեզ, հարաճել//յարաճել, հարանունութիւն//յարանունութիւն, հարաշխատ//յարաշխատ, հարառութիւն//յարառութիւն, հարասել//յարասել, հարարթուն//յարարթուն, հարընթաց//յարընթաց:

## **Հոմ//Հոմա**

Հոմանիշ, հոմանիշային, հոմանիշվել//հոմանիշուել, հոմանշային, հոմանուն, հոմանունութիւն//հոմանունութիւն:

## **Մակ//Մակա**

Մակաբերել, մակաբուծորեն//մակաբուծորէն, մակաբույծ//մակաբոյծ, մակաբույս/մակաբոյս, մակագրութիւն//մակագրութիւն, մակադրել, մակալեզու, մակակետ//մակակետ, մակահնչույթ//մակահնչոյթ, մակաճել, մականուն, մակաշրջան, մակբայ, մակբայացնել, մակերես, մակերեսորեն (մակերեսորէն, մակընթաց, մակընծյուղել//մակընծիւղել, մակկոկորդ, մակուղեղ:

## **Նախ//Նախա\***

Նախաբազուկ, նախաբառ, նախաբեմ, նախաբ-  
նագիր, նախագավիթ//նախագաւիթ, նախադէպ//  
նախադէպ, նախադիր, նախադպրոց, նախագոր//նա-  
խագօր, նախաթաթ, նախանդամ, նախանցյալ//նա-  
խանցեալ, նախարշալույս//նախարշալոյս, նախդիր,  
նախերգանք, նախեակ, նախընթրիք, նախընծա//նա-  
խընծայ, նախիմաց, նախուտեստ:

## **Ներ//Ներա**

Ներագդուն, ներածություն//ներածութիւն, ներա-  
ճել, ներանձնանալ, ներանձն, ներամփոփում, նե-  
րամուսնական, ներաշխարհ, ներառել, ներգաղթ,  
ներածնություն//ներածնութիւն, ներակենտրոն, նե-  
րահայաց//ներահայեաց, ներաչափ, ներակայորեն//  
ներակայօրէն, ներակայություն//ներակայութիւն, նե-  
րակա//ներակայ:

## **Շաղ**

Շաղկապ, շաղկապական, շաղկապային, շաղկա-  
պել, շաղկապենաբորբ, շաղկապենի, շաղկապում:

---

\* Արմատը ժամանակի ընթացքում որպէս ածանց է հանդես գալիս:

## **Շար//Շարա**

Շարագիծ, շարագլուխ, շարադասական, շարադրել, շարակարգ, շարակցել, շարահարել//շարայարել, շարահարկ//շարայարկ, շարահյուսագետ//շարահիւսագետ, շարահյուսություն//շարահիւսութիւն, արհարել//շարյարել, շարունակ, շարունակաբար, շարունակական, շարունակականություն//շարունակականութիւն, շարունակել, շարունակելի, շարունակելիություն//շարունակելիութիւն, շարունակություն//շարունակութիւն, շարունակում:

## **Չ**

Չաստված//չաստուած, չեղյալ//չեղեալ, չէ, չեւթյուն//չեւթիւն, չիմաստուն, չիմացություն (չիմացութիւն), չկամ, չկամորեն//չկամօրէն, չիաս, չտես, չտեսություն//չտեսութիւն:

## **Պան**

Պանարմենիզմ, պանբարխատ, պանթուրքիզմ:

## **Պար//Պարա**

Պարագա//պարագայ, պարագայական, պարագայապաշտ, պարագիծ, պարագիր, պարագլուխ,

պարագծել, պարագնաց, պարականոն, պարականոնել, պարբերաբար, պարբերաթերթ, պարբերական, պարբերույթ//պարբերոյթ, պարունակ, պարունակել, պարփակ, պարփակել, պարփակում:

## **Ստոր//Ստորա**

Ստորաբաժանել, ստորագետնյա//ստորագետնեայ, ստորագիր, ստորագծել, ստորագնահատել, ստորադաս, ստորադիր, ստորակետ//ստորակետ, ստորաշերտ, ստորասուզել, ստորաստիճան, ստորգետնյա//ստորգետնեայ, ստորլեռնյա//ստորլեռնեայ, ստործնոտային//ստործնօտային, ստործովյան//ստործովեան, ստորոգել, ստորոգյալ//ստորոգեալ, ստորուդի, ստորջրային, ստորջրյա//ստորջրեայ:

## **Վեր//Վերա**

Վերաբերել, վերաբերում, վերաբնակ, վերաբնակեցնել, վերադառնալ, վերադաս, վերադասել, վերադարձ, վերադիր, վերածել, վերածին, վերաճ, վերաճել, վերաճուրդ, վերամուսնանալ, վերայց, վերապրել, վերապրում, վերարձակել, վերծանել:

## **S**

Տգեղ, տհաճ, տհաճո//տհաճոյ, տհաս, տհասուլթ-  
յուն//տհասուլթիւն, տհերկ, տհոտ, տճև//տճեւ, տմարդ,  
տմարդի:

## **Տար//Տարա**

Տարաբաժանել, տարաբախտ, տարաբարբառ,  
տարաբևեռ//տարաբեւեռ), տարաբնակ, տարաբ-  
նույթ//տարաբնոյթ, տարագիծ, տարագիր, տարա-  
դէմ//տարադէմ, տարադրամ, տարաժամանակյա//  
տարաժամանակեայ, տարանջատ, տարաշխարհ,  
տարարժան, տարբեր, տարբերանշան, տարիմաստ,  
տարկետում//տարկէտում, տարորոշ, տարօրինակ:

## **Տրամ//Տրամա**

Տրամաբաշխել, տրամագիծ, տրամագիր, տրա-  
մագծային, տրամադիր, տրամադրել, տրամախաչել,  
տրամախոհ, տրամախոս//տրամախօս, տրամանկ-  
յուն//տրամանկիւն, տրամանկյունաճև//տրամանկիւ-  
նաճեւ, տրամանկյունային//տրամանկիւնային, տրա-  
մաչափ:

## **Ց**

Ցայգ, ցայգաբաց, ցայգալույս, ցայսօր, ցարդ, ցգրություն//ցգրութիւն, ցերեկ, ցերեկեւ, ցմահ, ցոտե-սություն//ցոտեսութիւն:

## **Փոխ//Փոխա**

Փոխաբեռնել, փոխաբերաբար, փոխաբերական, փոխագրել, փոխադրական, փոխադրել, փոխադրիչ, փոխազդել, փոխակերպել, փոխակերպում, փոխայց, փոխայցել, փոխանուն, փոխանցել, փոխասաց, փոխարժեք//փոխարժեք, փոխարքա//փոխարքայ, փոխարկած//փոխարուած, փոխտնօրեն//փոխտնօրեն:





# ԿԵՐՓԱԾԱՆՇՆԵՐ

### **Ալի**, ած.

Ախորժալի, բուրումնալի, դյուբալի//դիւբալի, երկյուղալի//երկիւղալի, զվարճալիորեն//զուարճալիորեն, զվարճալիութիւն//զուարճալիութիւն, իմաստալիորեն//իմաստալիորեն, ջրալի, ջրալիութիւն//ջրալիութիւն:

### **Ախ**, գ., ած.

Գիջաշաղախ, գյուղաշաղախ//գիւղաշաղախ, հարդաշաղախ//յարդաշաղախ, մթնաշաղախ, շաղախ, շաղախել, շաղախվածք//շաղախուածք, վարդաշաղախ, տղմաշաղախ, ցողաշաղախ//ցողաշաղախ:

### **Ած\***, բ., գ.,

Ավերածութիւն//ավերածութիւն, գթածորեն//գթածորեն, գծած, դեղնածութիւն//դեղնածութիւն, երկյուղած//երկիւղած, զարգացածութիւն//զարգացածութիւն, ընկած, հոգնածութիւն//յոգնածութիւն, նեխած, նշանած:

---

\*Բայական վերջավորությունը դիտարկվում է որպես վերջածանց, քանի որ բառիմաստի փոփոխություն է առաջացնում:

### **Ածո**, գ.

Բրածո//բրածոյ, դրածո//դրածոյ, երկաթահալածո//երկաթահալածոյ, թափածո//թափածոյ, թթվապահածո//թթուապահածոյ, հանածո//հանածոյ, ձկնապահածո//ձկնապահածոյ, ձուլածո//ձուլածոյ, չափածո//չափածոյ:

### **Ածու**, գ., ած.

Ամոթածու//ամօթածու, բուսահավաքածու//բուսահաւաքածու, բրածու, թեկնածու, թեկնածուական, թեկնածություն//թեկնածութիւն, ժողովածու, հավաքածու//հաւաքածու, հյուսածու//հիւսածու, պահածու:

### **Ակ**, գ., ած.,

Բազմատեսակություն//բազմատեսակութիւն, բուրակվել//բուրակուել, գիսակավոր//գիսակաւոր, գիտակ, ծորակավոր//ծորակաւոր, կայծակ, կղզյակ//կղզեակ, հասակ, հիսնակ//յիսնակ, տեսակ, օղակավոր//օղակաւոր:

### **Ական**, ած., գ.,

Աբբայական, գիտականորեն//գիտականօրէն, գրական, գրականություն//գրականութիւն, ծանոթագ-

րական//ծանօթագրական, ծխական, հնչյունական//  
հնչիլնական, հուղայական//յուղայական, մտավորա-  
կան//մտաւորական, տւական//տեւական:

### **Ակի**, ած., գ., մկբ.

Առանձնակի, բազմակի, եզակիորեն//եզակիօրէն,  
եզակիություն//եզակիութիւն, երկակի, թեթևակի//  
թեթեւակի, հաճախակի//յաճախակի, հոգնակիածն//  
յոգնակիածեւ, հոգնակիացնել//յոգնակիացնել, որոշա-  
կիություն//որոշակիութիւն:

### **Ամբ\***, մկբ.

Անձամբ, դիտմամբ, իրավամբ//իրաւամբ, հեշ-  
տությամբ//հեշտութեամբ, մասամբ, մեծամասամբ,  
որջամբ, սխալմամբ, ստիպմամբ, վերաբերմամբ:

### **Այթ**, գ.

Ճառագայթ, ճառագայթագոտի//ճառագայթագօ-  
տի, ճառագայթահավաք//ճառագայթահաւաք, ճառա-  
գայթածն//ճառագայթածեւ, ճառագայթավետ//ճառա-  
գայթաւետ, ճառագայթավոր//չառագայթաւոր, ճառա-  
գայթել, ռադիոճառագայթ, ռենտգենաճառագայթ:

---

\* Հոլովական վերջավորությունը ժամանակի ընթացքում որպես վերջածանց է հանդես գալիս:

**Ային//Այն),** ած.

Արևային//արեւային, բերքահավաքային//բերքահավաքային, բզեզային//բզեզային, գավառային//գավառային, գծայնություն//գծայնութիւն, գոտկատեղային//գոտկատեղային, դասակարգայնորեն//դասակարգայնօրէն, խոսքային//խօսքային, մեջքային//մեջքային, միջազգայնագետ//միջազգայնագետ, մրցութային//մրցոյթային, յուղայնություն//իւղայնութիւն, նամակայնություն//նամակայնութիւն, նավթագագային//նաւթագագային, նյարդայնանալ//նեարդայնանալ, շրթնայնացնել, ջղայնություն//ջղայնութիւն, տագնապայնություն//տագնապայնութիւն, ցեղայնացնել, փուլայնացում:

**Այն,** ած., գ.

Ընդունայնախոս//ընդունայնախօս, ձեռնունայն, ձեռնունայնօրեն//ձեռնունայնօրէն, ձեռնունայնություն//ձեռնունայնութիւն, ոստայն, ոստայնաձև//ոստայնաձեւ, ոստայնանկություն//ոստայնանկութիւն, ունայն, ունայնախօսել//ունայնախօսել:

**Այք, գ.**

Աղորայք, իշխանայք, ստորերկրայք, քմայք, քմայքային, քմայքոտ, քմայքոտություն//քմայքոտութիւն, քմայքորեն//քմայքօրէն:

**Ան, գ., ած.**

Ածան, բաժան, իթան, իթանավոր//իթանաւոր, կթան, կլանել, շրջան, փական, օրրան:

**Անդ, ած., գ.**

Բոցեռանդ, եռանդ, հորդեռանդ, մոլեռանդ, սարանդոստ, սարանդոստիկ, սրտեռանդ, վարսանդ, փութեռանդ:

**Անդակ, գ., ած.**

Այլանդակ, եռանդակ, հողանդակ:

**Անի, գ., ած.**

Ավազանի//աւազանի, բազկաթևանի//բազկաթեւանի, բազմազլխանի, բազմոտանի, բյուրոտանի//բիւրոտանի, գեղանի, երեքհարկանի//երեքյարկանի,

երկլեզվանի//երկլեզուանի, ճյուղանի//ճիւղանի, յոթանկյունանի//տօթանկիւնանի:

### **Անուտ**, գ.

Բոցանուտ, կիզանուտ, հեղանուտ//յեղանուտ, հոսանուտ, հովանուտ, հորձանուտ//յորձանուտ, հրանուտ, նազանուտ, վզանուտ, վիժանուտ:

### **Անց**, մկբ.

Գլխանց, դրսանց, ետևանց//ետեանց, երեսանց, երթանց, հեռվանց//հեռուանց), ձեռանց, սրտանց, վերևանց//վերեանց, տականց:

### **Անք**, գ.

Անարգանք, բամբասանք, բարբաջանք, գալարանք, գայթակղանք, գգվանք//գգուանք, գլխացավանք//գլխացաւանք, դավանանք//դաւանանք, դյութանք//դիւթանք, հարդարանք//յարդարանք:

### **Աշ**, ած.

Թթվաշ//թթուաշ, թթվաշահամ//թթուաշահամ, թթվաշանալ//թթուաշանալ, թթվաշացնել//թթուաշացնել, թթվաշացում//թթուաշացում, թթվաշուկ//թթուաշուկ, մատղաշ, մատղաշություն//մատղաշութիւն:



## **Ասուն//Սուն**, ած., թվ., գ.

Դառնասուն, զովասուն, վայրասուն, վշտասուն:

## **Աստ**, գ.

Առագաստ, առագաստանավ//առագաստանաւ, բառիմաստ, դյուրիմաստ//դիւրիմաստ, երկիմաստ, իմաստ, իմաստավորել//իմաստաւորել, իմաստուէր-յուն//իմաստուէրին, իմաստուն, նույնիմաստ//նոյնի-մաստ)

## **Աստի**, գ.

Կայմանավաստի//կայմանաւաստի, նավաստի//նաւաստի, նավաստիական//նաւաստիական, նավաստիութիւն//նաւաստիութիւն, ռազմանավաստի//ռազմանաւաստի:

## **Ավ**, ած., մկբ.

Բարյավ//բարեաւ, դժվարավ//դժուարաւ, դյուրավ//դիւրաւ, սակավ///սակաւ, սակավագետ//սակա-լագետ, սակավագյուտ//սակաւագիւտ, սակավաթիվ//սակաւաթիւ, սակավախոս//սակաւախօս, սակավա-ծանոթ//սակաւաճանօթ, սակավարյուն//սակաւա-րիւն:

### **Ավար\***, ած., գ.

Ընտանեվար, մտերմավար, մտերմավարաբար, մտերմավարություն//մտերմավարութիւն, վայելչավար:

### **Ավետ**, ած.

Անդորրավետ//անդորրաւետ, արդյունավետ//արդիւնաւետ, բոցավետ//բոցաւետ, բուրավետ//բուրաւետ, գունավետ//գունաւետ, դաշտավետ//դաշտաւետ), երանավետ//երանաւետ, երջանկավետ//երջանկաւետ, ձյունավետ//ձիւնաւետ, շահավետ//շահաւետ:

### **Ավուն**, ած.

Բարձրավուն//բարձրաւուն, գանգրավուն//գանգրաւուն, գորշավուն//գորշաւուն, դառնավուն//դառնաւուն, դեղնականաչավուն//դեղնականաչաւուն, երկարավուն//երկարաւուն, կլորավուն//կլորաւուն, ճերմակավուն//ճերմակաւուն, շիկավուն//շիկաւուն, քաղցրավուն//քաղցրաւուն:

---

\* Արմատը ժամանակի ընթացքում որպես ածանց է հանդես գալիս:

### **Ատ**, գ., ած.

Բացատ, բկատ, բճատել, գիշատիչ, գլխատ, գլխատել, գունատ, թելատ, պոչատ:

### **Ար**, գ.

Գալար, եռամեծար, զարդարել, կերպար, հարդար//յարդար, մեծարանք, մեծարել, ջղագալար, տիպար, ցամքար:

### **Արան**, գ.

Ավետարան//աւետարան, բառարան, բյուրեղագործարան//բիւրեղագործարան, բնակարան, գաղթարան, գանձարան, դասարան, նախակրթարան, նվագարան//նուագարան), տեսարան:

### **Արդ**, գ., ած.

Անկյունարդ//անկիւնարդ, գմբեթարդ//գմբեթարդ, թամբարդ, խաչարդ, խորանարդ, խորանարդաձև//խորանարդաձեւ, կոնարդ, կորնթարդ, ձվարդ//ձուլարդ, ձվարդաձև//ձուլարդաձեւ:

**Արեն**, գ., ած., մկբ.

Հռոմարեն//հռոմարեն, հունարեն//յունարեն, չինարեն//չինարեն, փոխարեն//փոխարեն, քաղղեարեն//քաղղեարեն:

**Արիմ**, ած.,

Անհավատարիմ//անհավատարիմ, հավատարիմ//հավատարիմ:

**Արք**, գ.

Ախտարք\*, գործարք, գործարքային, ժանգարք, լուծարք, կետարք//կետարք, կետարքավոր//կետարքաւոր, մեծարք, մուծարք, ստուգարք:

**Ացք**, գ.

Արմացք, ընչացք, ընչացքավոր//ընչացքաւոր, մեծընչացք, փարթամընչացք:

**Աքի**

Արմատաքի:

---

\* Տե՛ս Սո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:

### **Բան//Աբան, գ.**

Ականջաբան, արվեստաբան//արուեստաբան, բնաբան, բուսաբան, գավառաբան//գաւառաբան, դիցաբան, երկրաբան, թույնաբան//թոյնաբան, ձևաբան//ձեւաբան, ներվաբան//ներոււաբան:

### **Բար//Աբար, մկբ.**

Ագահաբար, ազնվաբար//ազնուաբար, գագանաբար, գայլաբար, դավադրաբար//դաւադրաբար, դժվարաբար//դժուարաբար, դյուցազնաբար//դիւցազնաբար, երկյուղածաբար//երկիւղածաբար, նենգաբար, նվաստաբար//նուաստաբար:

### **Գար//Ագար, գ., ած.**

Գլխագար, թթվագար//թթուագար, խելագար, խելագարորեն//խելագարօրէն, խելագարվել//խելագարուել, նյարդագար//նետարդագար, պղնձագար, ջղագարային, սիրագար, փութագար:

### **Գին//Ագին//Ագն, մկբ., ած.**

Ազնվագին//ազնուագին, դառնագին, երկյուղագին//երկիւղագին, գայրագնություն//գայրագնութիւն,

խռովագին, կաթոգին, կարոտագին//կարօտագին, հևագին//հեւագին, մթագնանք, մթագնել, մթագնուկ-յուն//մթագնութին, ոռնագին, սովագնել, վշտագնորեն//վշտագնօրէն, վշտագնում, տաժանագին, տենդագին, տենդագնորեն//տենդագնօրէն, ցավագին//ցաւագին, ցավագնել//ցաւագնել, ցավագնորեն//ցաւագնօրէն, ուժգին:

### **Գործ//Ագործ, գ.**

Այլումինագործ//այլիմինագործ, աղյուսագործ//աղիւսագործ, անվագործ//անուագործ, բյուրեղագործ//բիւրեղագործ, բրոնզագործ, գաջագործ, գեղծագործ, թնդանոթագործ//թնդանօթագործ, նավթագործ//նաւթագործ, նիզակագործ:

### **Գույն//Ագույն, ած.**

Առավելագույն//առաւելագոյն, բարձրագույն//բարձրագոյն, գերագույն//գերագոյն, լավագույնս//լաւագոյնս, ծայրագույնորեն//ծայրագոյնօրէն, նորագույն//նորագոյն, նվազագույն//նուազագոյն, վեհագույն//վեհագոյն, վշտագույն//վշտագոյն, փոքրագույն//փոքրագոյն:

### **Ե, ած.**

Ագատե//ագատե, բազալտե//բազալտե, բամբակե//բամբակե, գիպսե//գիպսե, եղեգնե//եղեգնե, երկաթե//երկաթե, գմբուխտե//գմբուխտե, էմալե//էմալե, նռնաքարե//նռնաքարե, փայտե:

### **Եկ, գ.**

Առաջնեկ, բղեկ, երևեկ//երևեկ, երևեկ, լայնափեռեկ, խեփեկ, ճայեկ, ճարեկ\*, ճռեկ, չերևեկ//չերևեկ, վերջնեկ, քառեկ:

### **Եղ, ած.**

Ազդրեղ, ահեղ, այտեղ, աչեղ, բոցեղ, գուևեղ, դյուրեղ//դիւրեղ, զորեղ//զօրեղ, թիկևեղ, ձայնեղ:

### **Եղեն, գ.**

Ակևեղեն//ակևեղեն, բանջարեղեն//բանջարեղեն, բրդեղեն//բրդեղեն, գոհարեղեն//գոհարեղեն, զարդեղեն//զարդեղեն, կյուրթեղեն//կիւրթեղեն, շորեղեն//շորեղեն, ոսկեղեն//ոսկեղեն, չրեղեն//չրեղեն, քաղցրեղեն//քաղցրեղեն:

---

\* Տե՛ս Եղ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

**ԵՃ**, գ.

Բվեճ//բուեճ, դուռեճ\*, խճեճ:

**ԵԱ**, ած.

Անխոհեմություն//անխոհեմութիւն, խոհեմ, խոհեմանալ, խոհեմորեն//խոհեմօրէն, խոհեմություն//խոհեմութիւն, կարժեմ, կրճեմ:

**ԵԱՆ**, մկբ.

Երբեմն, ուրբեմն:

**ԵՆ\***, ած., մկբ.

Այժմեն//այժմէն, այծենագործ, այծենակաճ, անդրենածին//անդրէնածին, գրենական, նկարեն//նկարէն, նորեն//նորէն, շորորալեն//շորորալէն, շփշփալեն//շփշփալէն, պապենական:

---

\* Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

\* Որոշ օրինակներում հոլովական վերջավորությունը ժամանակի ընթացքում որպէս վերջածանց է հանդես գալիս:



### **Եևի, գ.**

Աճաբենի, արմավենի//արմաւենի, արփենի, բալենի, բարդենի, բոխենի, թթենի, իսնձորենի, կշենի, կռնենի:

### **Եևք, գ.**

Աչքալուսենք, իրենք, կողենք, սանահարենք, սանահերենք//սանահերենք, սանամերենք//սահամերենք:

### **Եշտ, գ., ած.,**

Անհրաժեշտ, անհրաժեշտաբար, անհրաժեշտականություն//անհրաժեշտականութիւն, անհրաժեշտորեն//անհրաժեշտօրէն, անհրաժեշտություն//անհրաժեշտութիւն, հրաժեշտ, հրաժեշտախնջույք//հրաժեշտախնջոյք, հրաժեշտային:

### **Ես, գ.**

Խամահանես//խամահանես\*:

---

\* Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:

### **Եստ**, գ., ած.

Գովեստ, գովեստագիր, զինապահեստ, համեստ, համեստորեն//համեստօրէն, նավթապահեստ//նավթապահեստ, պահեստ, պահեստային, ուտեստ, ուտեստեղեն//ուտեստեղէն:

### **Եվան/Եւան**, գ.

Գիշերօթեան//գիշերօթեան, թերթեանունք//թերթեանունք, իջեան//իջեան, իջեանային//իջեանային, իջեանատեր//իջեանատեր, իջեանատուն//իջեանատուն, հոտեան//հոտեան, պիտեան//պիտեան, օթեան//օթեան, օթեանատեղ//օթեանատեղ:

### **Եվետ/Եւետ**, գ.

Պերեւետել//պերեւետել\*, փերեւտանք//փերեւտանք, փերեւտել//փերեւտել, փերեւտիկ//փերեւտիկ, փերեւտում//փերեւտում:

### **Եվոր/Եւոր**, ած.

Արտևոր//արտևոր, գործևոր//գործևոր, դրսևոր//դրսևոր, հանդևոր//հանդևոր, հարգևոր//յարգևոր, հարկևոր//հարկևոր, հարսնևոր//հարսնևոր, ռուս-

---

\* Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976:

ևոր//ռուսեւոր, վարդևորի//վարդեւորի, ունևոր//ունեւոր:

### **Եր, գ.**

Բախտերք, դևդեր\*, հիսներյակ//յիսներեակ, ճեններ, ճենճերալ, ճլերք, յոթներյակ//եօթներեակ, ոսկերիչ, ոսկերչական:

### **Երեն, գ., ած., մկբ.**

Աբխազերեն//աբխազերեն, աղվաներեն//աղուաներեն), անգլերեն//անգլերեն, բասկերեն//բասկերեն, բուրյաթերեն//բուրեաթերեն, գերմաներեն//գերմաներեն, թուրքմեներեն//թուրքմեներեն, հայերեն/հայերեն, շվեդերեն//շուեդերեն), սկուլերեն//սկուլերեն:

### **Երիմ, ած.**

Ոխերիմ, ոխերիմություն//ոխերիմութիւն, ոխերմական, ոխերմորեն//ոխերմօրեն, ոխերմություն//ոխերմութիւն:

---

\* Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:

**Եց**, ած., գ., մկբ.

Գեղեցիկ, գեղեցկորեն//գեղեցկօրէն, գեղեցկութիւն//գեղեցկութիւն, դիեցիկ, զգեցարան:

**Եք**, ած., մկբ., գ.

Ամենեքյան//ամենեքեան, ամենուրեք//ամենուրեք, այլուատեք, այլուրեք, արժեք//արժեք, բերանբացեք//բերանբացեք, բոլորեքին, գերեզմանօրնեք//գերեզմանօրինեք, երբեք, նշանդրեք//նշանդրեք:

**Ժեռ//Աժեռ**, ած.

Ամպածեռ, դեղնածեռ, կապտածեռ, կարմրածեռ, ոսկեծեռ:

**Ժեռ//Աժեռ**, ած.

Ախտածեռ//ախտածեռ, ախտածեռտել//ախտածեռտել, որկորածեռ//որկորածեռ, որկրածեռ//որկրածեռ:

**Ի**, գ., ած.

Աղի, բաղազգի, գաղտագողի, դարանատեղի, եռանկյունի//եռանկիւնի, երկսայրի, ներքինի, սոճի, ուղտատեղի, քառակուսի:

**Իզմ**, գ.

Աթեիզմ//աթեիզմ, անարիսիզմ, ավանտյուրիզմ// աւանտիւրիզմ, բարբարիզմ, բյուրոկրատիզմ//բիւրոկրատիզմ, դարվիսիզմ//դարուիսիզմ, իդեալիզմ//իդեալիզմ, յոգիզմ//եօգիզմ, պանթեիզմ//պանթեիզմ, ուսանչիզմ//ուսանչիզմ:

**Իլ** գ., ած.

